ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 դեկտեմբերի 2021թ. N 03-Լ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ հոդվածի 8-րդ կետով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը

որոշում է.

1. Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության գործընթացում ներգրավել միջազգային փորձագետներ:

2. Սահմանել Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության գործընթացին միջազգային փորձագետների ներգրավման վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման
հանձնաժողովի
2021 թվականի դեկտեմբերի 30-ի
N 03 L որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (այսուհետ նաև՝ Թեկնածուներ) բարեվարքության ուսումնասիրության գործընթացում ներգրավել միջազգային փորձագետների (այսուհետ՝ Փորձագետ) ներգրավման անհրաժեշտության մասին:

2. Փորձագետն իրականացնելու է Հանձնաժողովի կողմից Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ եզրակացության կազմման փուլում խորհրդատվության տրամադրման աշխատանքներ: Բարեվարքության վերաբերյալ եզրակացության կազմումն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Տվյալ գործառույթն իրականացնող Փորձագետի ներգրավումը նախատեսվում է երկու փուլով՝ 2022 թվականի հունվարի 4-ից մինչև հունվարի 19-ը և 2022 թվականի հունվարի երկրորդ տասնօրյակից մինչև փետրվարի երրորդ տասնօրյակն (կախված գրավոր քննության փուլի ավարտից) ընկած ժամանակահատվածներում:

3. Որպես Փորձագետ կարող է ներգրավվել վերջին երկու տարում հակառուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից առաջադրվող անձը, որն ունի հակակոռուպցիոն ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն:

4. Յուրաքանչյուր կազմակերպություն կամ միավորում կարող է ներկայացնել մեկ փորձագետի թեկնածություն:

5. Կազմակերպությունները կամ միավորումները պետք է ներկայացնեն՝

1) գրություն՝ ուղղված Հանձնաժողովին.

2) կազմակերպության կամ միավորման անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

3) փաստաթուղթ, որը կվկայի Փորձագետին առաջադրող կազմակերպության կամ միավորման՝ վերջին երկու տարվա ընթացքում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության մասին.

4) Փորձագետի ինքնակենսագրություն (այդ թվում՝ մասնագիտական գործունեության նկարագրությամբ)՝ կցելով հակակոռուպցիոն ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթղթեր (այդ թվում՝ առկայության դեպքում՝ գործատուի կողմից տրամադրված տեղեկանք):